Որոշման հրապարակային հասանելիությունը սահմանափակելու վերաբերյալ

Վերաբերելի իրավական կարգավորումներ՝

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ Հանձնաժողովի **որոշումները և եզրակացությունները** դրանց ընդունման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում են Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, **բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների**:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ **նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ**:

«Հանձնաժողովի կողմից Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի նկատմամբ հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերալ վարույթի շրջանակում կայացված 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 10/2-2022-2023 կասեցման որոշման՝ որոշ հատվածների հասանելիությունը սահմանափակված տարբերակով հրապարկված լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարույթի շրջանակում Հանձնաժողովը ձեռք է բերել և օգտագործել տվյալներ, որոնք պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք: Այդպիսի տվյալները կարող են իրական նշանակություն ունենալ իրավասու մարմինների կողմից իրականացվող հետագա գործողությունների համար՝ հաշվի առնելով նաև նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության՝ քրեադատավարական նորմերով սահմանված օրենսդրական պահանջը»:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 10/2-2022-2023

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԹԻՎ 10/2022 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 12 ապրիլի, 2023 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի (նիստը նախագահող), Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին հարուցված թիվ 10/2022 վարույթում առկա նյութերը.

ՊԱՐԶԵՑ

1. 2018 թվականի մայիսի 15-ից 2021 թվականի օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում Տիգրան Ավինյանը զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի պաշտոն, որի ժամանակահատվածում՝ 2019 թվականի հուլիսի 8-ից հանդիսացել է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԱՆԻՖ) տնօրենների խորհրդի նախագահ (2019 թվականի հուլիսի 8-ին կայացած տնօրենների խորհրդի նիստի արձանագրություն):

2. 2022 թվականի սեպտեմբերի 23-ի՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ Տիգրան Ավինյանը նշանակվել է Երևանի քաղաքապետի տեղակալ:

3. Վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու նպատակով 2023 թվականի փետրվարի 9-ին Հանձնաժողովը ԱՆԻՖ-ից պահանջել է 2019-2023 թվականներին իրականացրած ոլորտային ծրագրերի (այդ թվում՝ նախատեսվող ծրագրերի) և դրանց իրականացման վերաբերյալ հաշվետվությունների, ինչպես նաև տնօրենների խորհրդի ձևավորման օրվանից սկսած՝ հրավիրված նիստերի արձանագրությունների պատճենները, [redacted]

[redacted]

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 84-րդ հոդվածով սահմանված են տնօրենների խորհրդի իրավասությունների շրջանակը, որում, մասնավորապես, ներառված են ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշման, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման, ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանման, ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատման իրավասությունները:

«ԱՆԻՖ»-ի կանոնադրության 13.1 կետի «ը» ենթակետով սահմանված է, որ Տնօրենների խորհրդի իրավասությանն է վերապահված ընկերության տարեկան

ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը:

Վերլուծելով ներկայացված տվյալները՝ Հանձնաժողովի մոտ ձևավորվել է ողջամիտ կասկած առ այն, որ ընկերության գործունեության ընթացքում հնարավոր է իրականացվել են չարաշահումներ, որոնք պետք է հանդիսանան բազմակողմանի և օբյեկտիվ քննության առարկա և ստուգվեն քրեադատավարական ընթացակարգերով:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի համար անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված վարույթի շրջանակներում մինչ վերջնական եզրակացության հանգելը անհրաժեշտ է քրեադատավարական ընթացակարգերով վերը նկարագրված հանգամանքներում առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության պարզում՝ ուստի ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով ՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին հարուցված թիվ 10/2022 վարույթը կասեցնել:
2. ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացնել վարույթում առկա նյութերը՝ քրեադատավարական ընթացակարգերի շրջանակում նյութերը գնահատելու, իսկ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ընթացք տալու նպատակով:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Տիգրան Ավինյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**